ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

23 օգոստոս 2021 թվականի N236-Ա

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 31-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 36-րդ և 37-րդ հոդվածների 1-ին մասերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի 2017 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի «Հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների տնօրինման և գրանցամատյան վարելու պարտականությունները վերապահելու մասին» թիվ 120-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու և հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների տնօրինման և գրանցամատյան վարելու համար պատասխանատու աշխատակից սահմանելու մասին» թիվ 31-Ա հրամանը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 25-ից:

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

2021 թ. օգոստոս 23
Երևան

competition.am կայքում հրապարակման օրը՝ 24 օգոստոսի, 2021 թվական: